

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂՊԱՇԵԱՆ (ԽԻԿԱՐ)

Մարդը, Գրողը, Թարգմանիչը, Հրապարակագիրը, Քաղաքական Գործիչը, Երգիծագիրը
(Պէյրութ, 2017, 606 էջ)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂՊԱՇԵԱՆ. ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅԸ

Հովհաննես Աղպաշեան անուն-ազգանունը ինձ ծանոթ է 1980-ականներից, երբ հնարավորություն ունեցա ավելի մոտիկից ծանոթանալու սփյուռքյան մամուլին, ընթերցելու Հովհաննես Աղպաշեանի հրապարակախոսական և երգիծական հոդվածները: Ապա հանդիպեցի նույն ազգանվամբ այլ հեղինակի՝ Պարույր Աղպաշեան, և հետագայում, ոչ ի զարմանս ինձ, տեղեկացա, որ արժանավոր հոր արժանավոր որդին նույնպես հրապարակախոս-խմբագրապետ է:

Հնարավորություն ու պատիվ ունենալով գործակցել Սփյուռքի կառույցների և Աղպաշեանների պես անհատների հետ, գործնական բազմաթիվ շփումների, աշխատանքային հանդիպումների ընթացքում փորձեցի հասկանալ այդ բազմաշերտ, բազմաճյուղ, բարդ երևույթը, որ կոչվում է ՍՓՅՈՒՌՔ:

Ոչ միայն ընթերցել, քննարկել, ուշագրավ առաջարկներ եմ վերցրել Պարույր Աղպաշեանի հրապարակային հոդվածներից, այլև առիթներ եմ ունեցել անձամբ նրա հետ քննարկելու Հայաստան-Սփյուռք գործակցության բազմաթիվ խրթին, տարողունակ և տարաբնույթ հարցեր: Ինձ համար Պարույրը սփյուռքահայ մտավորականի իսկական կերպար է, ով կրթվելով Հայաստանում, լավ ճանաչելով հայաստանյան և սփյուռքյան իրողություններն ու մարդկանց հոգեբանությունը, կարողանում է շատ ճիշտ բացահայտել ամենակարևոր հարցերը, ախտորոշել խնդիրները և իր ճկուն մտքի ու կուռ տրամաբանության շնորհիվ բանաձևել պատասխանները, մատնացույց անել խնդիրների լուծումները:

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել հայր և որդի Աղպաշեանների քննական-վերլուծական-ստեղծագործական միտքը, երևույթները տարբեր տեսանկ-

յուններից դիտարկելու և անաչառ ներկայացնելու կարողությունը: Նրանք ունեն խոր ասելիք և համարձակ հայացք՝ գալիքի հանդեպ:

Այսօր, պատերազմում պարտությունից հետո, երբ բարդագույն իրավիճակում են հայտնվել մեր դիվանագիտությունն ու զինված ուժերը, երբ թշնամին ներթափանցել է մեր պետական տարածք, երբ ազգը չի կարողանում ուղղել իր կոտրված ողնահարը, մեզ օդ ու ջրի պես անհրաժեշտ է Հայրենիքի և Սփյուռքի համախմբում: Իհարկե, կան տարբեր խոսափողերով հնչող ձայներ, որոնք փորձում են ներկայացնել Հայաստան-Սփյուռք՝ անչափ կարևոր և երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող կապերը, սակայն արժեքավոր ու ծանրակշիռ է Պ. Աղպաշեանի խոսքը, ով հրատապ հոդվածների շարք է տպագրում նաև այս դժվարին ժամանակներում: Մեր կարծիքով, նրա ասելիքին պետք է ականջալուր լինեն պատասխանատուները, և այդ մեծածավալ տեղեկատվությունը պետք է օգտագործեն այս ծանր պայմաններում Հայրենիքի վերականգմանն աջակցելու համար:

Նրանց անցած կյանքի ճանապարհը, թողած հետագիծը դաս և օրինակ են երիտասարդ սերնդի համար: Լրագրողական, հրապարակախոսական ասպարեզում «Հովհաննես Աղպաշեան» և «Պարույր Աղպաշեան» ստորագրություններն անառարկելի հեղինակության խորհրդանիշ են:

Այն, որ հայր և որդի Աղպաշեանները անհատականություն են, նվիրյալ մտավորական և ճանաչված հրապարակախոսներ, դույզն-ինչ կասկած չկա: Բավարար է ծանոթանալ «Մարդը, Գրողը, Թարգմանիչը, Հրապարակագիրը, Քաղաքական գործիչը, Երգիծագիրը» գրքին՝ հասկանալու համար, թե որտեղ է թաքնված Պարույր Աղպաշեանի արմատը, որտեղից է սնվում նրա կենսական ու կենսառատ սկիզբը, ինչպիսի դաստիարակություն է նա ստացել իր փառահեղ մտավորական հորից: Հովհաննես Աղպաշեանի այս աշխատությունը, որ այդքան խնամքով հավաքել և կազմել է շնորհաշատ որդին, սեղանի գիրք կարող է հանդիսանալ յուրաքանչյուր հայրենասեր հայորդու համար: Այն ներառում է ութ բաժին, որոնք բովանդակում են հեղինակի հոդվածները, խորհրդածությունները, մտորումները, խոհագրությունները Սփյուռքի, Հայրենիքի, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների, Հայ Դատի, աշխարհում առկա գաղափարական-քաղաքական հակասությունների, ներգաղթի, հայապահպանության, հայ-արաբական կապերի, Միջին Արևելքում տիրող իրավիճակի մասին: Բացի հրապարակախոսական, քարոզչական, վերլուծական հոդվածներից, գրքում տեղ են գտել հեղինակի «Գրական կտորներ»-ը, «Գրականագիտական գեղարվեստական նյութեր», ինչպես նաև «Խիկարա-

կան կսմիթներ եւ խայթոցներ» բաժինները: Ամփոփիչ մասում զետեղված են հետաքրքրական հավելվածներ, ներկայացված են Հովհաննես Աղպաշեանի կյանքն ու գործը:

Աշխատությունում խտացված են ոչ միայն հեղինակի իմացությունը և տարիների կենսափորձը, այլև սերը, ոգին, նվիրումը Հայրենիքի, Սփյուռքի, նրա մարդկանց նկատմամբ: Այն ազգային արժեքների պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված մոտեցումների, մտահոգությունների և լուծումների ուրույն շտեմարան է, միաժամանակ, հայապահպանության, ազգային արժեքների և ինքնության պահպանման, Հայոց ոսկեղինիկ մայրենիի պաշտպանության, Հայրենիքը հավերժ պահելու նպատակով ուժերի համախմբման յուրօրինակ կոչնակ:

Գրքի առաջին՝ ընդգրկուն բաժինը վերնագրված է «Սփյուռքյան Հրապարակումներ, Հիմնախնդիրներ, Հոլովույթներ»: Այն ներառում է հոդվածներ, որոնցում հեղինակը ներկայացրել է իր հարցադրումներն ու մտորումները խնդրո առարկայի վերաբերյալ: Նա գտնում էր, որ սփյուռքահայերը ևս պետք է մասնակցեն համաշխարհային պատերազմին, կռվեն կողք-կողքի հայաստանցիների հետ՝ օգնելու իրենց եղբայրներին, որպեսզի համատեղ ուժերով ապահովեն հաղթանակ գերմանական ֆաշիզմի դեմ՝ դրանով իսկ հարց բարձրացնեն «Թուրքիոյ տիրապետութեան տակ գտնվող Հայաստանի մասը Սովետական Հայաստանին վերադարձնելուն մասին»:

Գիրքն ամբողջովին ներծծված է Հայրենիքի նկատմամբ անսահման սիրով, միաժամանակ, Հայաստան ներգաղթելու, Հայրենիքի շենացմանը համահավաք մասնակցություն ունենալու հորդորներով:

Անհուն ցավով է նա անդրադառնում արտագաղթին, ներկայացնում, թե ինչպես է տնտեսական բարդ պայմանների հետևանքով հայկական համայնքը փոքրանում, ինչպիսի հոգեկան ապրումներ են ունենում հեռացողները, ովքեր ստիպված են լինում կրկին բռնել գաղթի ճանապարհը, այս անգամ՝ եվրոպական կամ ամերիկյան երկրներ և ամեն բան սկսել նորից: Տարբեր առիթներով բարձրաձայնում է ազգաձուլումի վտանգի մասին՝ մատնանշելով Ֆրանսիայի և Ամերիկայի երբեմնի «ծաղկուն» հայ գաղութների վիճակը: Եվ խորին համոզմունքով քարոզում է, որ փրկության գործը մասամբ Սովետական Հայաստանի կազմակերպած պարբերական ներգաղթն է:

Մասնակցելով հայ գրողների երկրորդ համագումարին՝ նա մոտիկից ծանոթանում է հայաստանցիների կյանքին ու գործունեությանը, նվաճումներին, տնտեսության զարգացման ընթացքին: Անթաքույց ուրախությամբ շեշտում է,

որ Հայաստանը հետամնաց գյուղատնտեսական երկրից վերածվում է արդյունաբերական հսկայի: Հերոսաբար, զոհողությունների գնով հայերը կառուցում են իրենց երկիրը՝ այն դարձնելով նաև կրթության ու գիտության, ազդեցիկ արվեստի և գրականության օրրան:

Նա հպարտությամբ է նշում, որ Երևանը դարձել է գիտության, արվեստի և արդյունաբերության կենդանի օջախ, այն արագորեն աճում է և բարեզարդվում, քայլ առ քայլ վերացվում են պատերազմի հետևանքները: Ինչպիսի հաճույքով է նկարագրում Բաղրամյան պողոտայի վրա կառուցվող պետական և գիտական կառույցների շինարարության ընթացքն ու ավարտը, ներկայացնում Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի շենքի շինարարությունը, բարձունքի վրա կառուցվող Պետական Ձեռագրատան և Մատենադարանի նոր շենքերը:

Հայաստանին «ցտեսություն» ասելով՝ հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանի փրկությունը նրա խորհրդայնացումն էր և իհարկե, իր ճակատագիրը ռուս ժողովրդի հետ կապելը: Նրա աշխատանքների մի մասը նվիրված են համաշխարհային պատերազմին հայերի մասնակցությանը, հերոս հայորդիների կերպարներին, հայ մարշալների ու գեներալների խիզախություններին և ի վերջո, սովետական ժողովրդի հերոսական հաղթանակին և ֆաշիզմի ջախջախմանը:

Այդքան ազգային, այդչափ հայրենասեր անձնավորությանը չէր կարող չմտահոգել Հայկական հարցը, և նա իր «Բարեկիրթ» թուրք լրագրողը», «Հայկական հողերու պահանջը անբաժանելի է ներգաղթէն», «Մտորումներ Հայ Դատին շուրջ», «1915–1946 երկու հակադիր թուականներ» և այլ գործերում արտահայտում է տառապող հայի ճիչը՝ կապված իրենից խլված Հայրենիքի, անարդարության, թուրք ենիչերիների կատարած ոճրագործությունների հետ: Դիմելով աշխարհասփյուռ հայությանը՝ նշում էր, որ նրանք իրենց համեստ լուման կարող են ունենալ խաղաղության ապահովման մեծ, համամարդկային գործում, այդուհանդերձ, պետք է ուշիմ և հավաքական ճիգերով հետապնդեն իրենց Դատը:

Որքան հեռատես էր Հ. Աղպաշեանը, որ իր հոդվածներում երբևէ հայ Դատի լուծման հույսը միջազգային կառույցների վրա չէր դնում: Իր «Դարձեալ մոռացուեցաւ հայ ժողովուրդը» հոդվածում նա պատգամում է, որ հայաստանյան իշխանավորները Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատեն միայն ցեղասպանության ճանաչման և մեր հողերը վերադարձնելու դեպքում:

Երիցս ճիշտ էր Հ. Աղպաշեանը, քանի որ միջազգային կառույցների քարլռությունը, անտարբեր կեցվածքը, մեր ազգային ողբերգության նկատմամբ ունեցած մոտեցումներն ակնհայտորեն դրսևորվեցին անգամ վերջերս՝ ղարաբաղյան 44-օրյա պատերազմի ընթացքում, երբ ֆոսֆորի անձրև էր տեղում արցախցիների գլխին, երբ Ադրբեջանն անօրինական կերպով պահում է գերիներին, կոպտորեն խախտում միջազգային մարդասիրական իրավունքի բոլոր նորմերն ու սկզբունքները: Իրենց մարդու իրավունքների պաշտպան հռչակած, համամարդկային մշակութային արժեքների ջատագով կառույցների աչքի առջև ազերիների կողմից ոչնչացվում են հայ դարավոր մշակութային հուշարձանները, մեր ժանյակակերպ խաչքարերն ու գերեզմանները, կողոպտվում և թալանվում են հայկական թանգարաններն ու եկեղեցիները...Արցախի անդամահատումը նման էր հայոց ցեղասպանության անցքերի կրկնությանը: ԱՄՆ նախագահի կողմից Հայոց ցեղասպանության եղելության ընդունումը կարծես մի նոր քայլ էր հայերի՝ իրենց իրավունքների վերականգման համար պայքարում, և այդ պայքարը երբեք կանգ չպետք է առնի...

Հեղինակը Սփյուռք-Հայրենիք փոխհարաբերությունների կիզակետում է պահում հայապահպանության հիմնահարցերը: Նրան խորապես մտահոգող հանգամանքն էր, թե արդյո՞ք Սփյուռքում հայերը կդիմակայեն սպառնացող մարտահրավերներին և մինչև ե՞րբ: Նա գտնում էր, որ խոշոր համայնքներում հայությունն իբրև իրար հետ նմանության հասարակաց հայտանիշ ունեն իրենց հայկական ծագումը, լեզուն ու մշակույթը, սովորույթներն ու ավանդույթները, որոնք տարբեր տարածաշրջաններում, տարբեր արագությամբ՝ դանդաղ, թե արագ, կշիջեն:

Հայապահպանության գործը Սփյուռքում նա համարում է բարդ և դժվարին, անգամ՝ հերոսական ճիգեր պահանջող գործընթաց: Նա գտնում էր, որ այդ աշխատանքները պետք է իրականացնել երեք ուղղություններով: Այսպես, ըստ Հ. Աղպաշեանի՝ հայապահպանության հիմնական գործոններն են.

ա) հայ ժողովրդի աշխատավոր խավերին բարեկամացնել ու կապել ասպնջական երկրների դեմոկրատական-առաջադիմական ուժերի հետ, որոնք հարգում են ազգային փոքրամասնությունների իրավունքները,

բ) հայապահպանման տեղական ճիգը /կրթական, մամուլի, մշակութային կազմակերպությունների մարզից ներս/ զուգորդել, համակարգել Հայրենիքի ջանքերի հետ:

գ) ցանկալի է, որ Հայրենիքն իր հերթին ավելի ընդարձակ և բազմակողմանի դարձնի կապերը Սփյուռքի հետ. տպագրի տարբեր լեզուներով գրքեր,

գրքույկներ, այլևայլ հրապարակախոսություններ և տարածի այն երկրներում, որտեղ ավելի շատ հայեր են ապրում:

Նման մոտեցումներից զատ, հեղինակն առանձնացնում է երիտասարդությանը, նրան հայրենասիրության և ազգասիրության ոգով դաստիարակելու խնդիրը, կարևորում նրա տագնապների, մտորումների, նրա առօրյայի և ապագայի մասին խորհրդածությունները: Նրա կարծիքով, երիտասարդ սերնդի լավագույն ապագան Հայաստանն է, որտեղ ապահով ապրելու, զարգանալու բոլոր հնարավորությունները կան:

Երկարամյա խմբագրապետին չէր կարող չհուզել հայկական մամուլի վիճակը Սփյուռքում և հատկապես լիբանանահայ մամուլի վիճակն ու գնալով նվազող ընթերցողների թիվը: Նա ցավով ու վրդովմունքով շեշտում է, որ շատերը պատճառաբանելով ժամանակի սղությունը, ընտանիքում հայերեն կարդացողների պակասը, գերադասելով կարդալ օտար մամուլ, չեն բաժանորդագրվում և չեն կարդում հայկականը: Մյուս կողմից, չկան հովանավորներ, բարերարներ, մամուլը գնալով դառնում է առևտրային: Միանշանակ ճիշտ էր այն պնդումը, որ մեծ է հայ մամուլի դերը Սփյուռքում հայապահպանության, ազգային արժեհամակարգի պահպանման, մայրենիի տարածման, հայ մշակույթի ու գրականության զարգացման գործում:

Հովհաննես Աղպաշեանն իր շատ հրապարակումներում, շնորհակալ է լինում նաև արաբ ժողովրդին, այն երկրներին, որոնք իրենց դռները բացեցին և տանիք ու աշխատանք տվեցին թուրքական յաթաղանից մազապուրծ, ծվատված հայ ժողովրդի մի հատվածին: Պատերազմը, տնտեսական դժվարություններն ու աղետներն առավել եղբայրացրին արաբ և հայ ժողովուրդներին: Արաբական աշխարհում ապաստանած հայ ժողովրդի բեկորները արաբների հետ միասնաբար կրեցին և՛ դժվարությունների բեռը, և՛ միասնաբար նշեցին հաղթանակներ, տոնեցին և զգացին անկախության բերկրանքը, արժևորեցին համատարած գրագիտության հասնելու, մշակույթը զարգացնելու արդյունքները, նրանք համատեղ կառուցեցին իրենց նոր հայրենիքը: Աղպաշեանի տարբեր առիթներով արտասանած ճառերը, հոբելյաններին նվիրված զեկուցումները լի են ազգասիրության և հայրենասիրության լույսով, հայապահպանության, արաբ ժողովրդի հետ բարեկամության ոգով, լիբանանյան համայնքին տված բարձր գնահատականներով, հայ գրականության մեծերին ըստ արժանվույն գնահատելու ձգտումով: Նրա հոդվածների մի շարքն էլ նվիրված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որի կենտրոնը Սուրբ Էջմիածինն է: Նա ճշգրտորեն բնութագրել է հայ եկեղեցու և հատկա-

պես Էջմիածնի տեղն ու դերը հայապահպանության գործում. պետականությունից զուրկ և անտիրական հայ ժողովուրդն իր փրկությունը տեսել է Էջմիածնի շուրջ համախմբման մեջ՝ այն համարելով իր գոյության միակ կռվանը: Աղպաշեանն անասելի խնամքով ու գորովանքով է նկարագրում իր մուտքը Էջմիածին, թե ինչպես անմիջապես աչքերին է զարնել զանգակատունը, ապա մինչ խորհրդային կարգերի հաստատումը միակ կրոնական բարձրագույն ուսումնական հաստատության շենքը՝ Գևորգյան ճեմարանը:

Հեղինակը թախիծով է հիշում Կոմիտաս վարդապետի դաշնամուրը, որ այդպես էլ դարձել է Էջմիածնական մասունք՝ այլևս երբեք չինչեցնելով տարաբախտ վարդապետի սրտի ձայնը: Հովհաննես Աղպաշեանն այնքան հյութեղ լեզվով, պատկերների առատությամբ և սիրով է նկարագրում իր Հայրենիքը, Էջմիածինը, որ տարագիր հայերը ընթերցելիս անգամ սիրահարվում էին իրենց Հայրենիքին և փափագում գեթ մեկ անգամ այցելել Հայաստան:

Գրքի յուրաքանչյուր էջից վեր է հառնում իր ժողովրդին անպարագիծ սիրով սիրող անձնավորության՝ նվիրյալ Հայի կերպարը: Նրա բազմակողմանի վերլուծական մտքի շողարձակումները, խորաթափանց դիտողականության վառ արտահայտությունները լույս են սփռում ոչ միայն հիմնահարցի, իր կողմից առաջադրված խնդրի, այլ մարդկային պայծառ էության, լուսավոր կերպարի ու վառ անհատականության վրա:

Հ. Աղպաշեանը թողել է հսկայական գրական ժառանգություն և իհարկե, ժառանգներ, որոնց փայլուն ներկայացուցիչը Պարույրն է: Այսօր էլ գործող լրագրող ու տաղանդաշատ հայագետ Պարույր Աղպաշեանի հզոր խոսքին, վերլուծական մտքին շատերս ենք սպասում:

Ամբողջովին միանում եմ գրքի առաջաբանում՝ «Ձօն»-ում, Պարույր Աղպաշեանի տված դիպուկ գնահատականին առ այն, որ ազգաշունչ ու հայրենապաշտ մեծ Մարդ և մեծ Հայ էր Հովհաննես Աղպաշեանը:

Արդիական են աղպաշեանական բանաձևումները, համահունչ մեր ժամանակներին: Հաշվի առնելով նրանց հարցադրումները՝ գործենք խելամտորեն, լինե՛նք լավատես ու հավատա՛նք մեր ժողովրդի իմաստնությանը և ինքնապահպանման ներուժին, փորձություններին դիմակայելու և վեր հառնելու կարողությանն ու հավերժելու վերին հրամանին:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

hranush.hranti@gmail.com